


Ա. Վ. ՈԴԻՆՑՈՎ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ
ՅԵՐԿՐԱՄԱՍԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թարգմ. Վ. Ա. ԱԳՐԱՐՅԱՆ




ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՆ ՀՐԱՄԱԿՁՈՒԹՅՈՒՆ 1934

631.5-
0. 24

Ա Զ ՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(ՅԵՐԿՐՈՂՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԸՆԿ. ՈԴԻՆՑՈՎԱ ԶԵԿՈՒ-
ՑՈՒՄԸ՝ ՅԵՐԿՐԳՈՐԾԿՈՒՄ 1934 թ. V-16-ի ՊԼԵՆՈՒՄՈՒՄ)



63(42.91)

1. ՅԱՆՔՄԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ազով-Սևծովյան Յերկրային առաջին կուսկոմնֆե-
րանսը՝ ՀԿԿ(բ) Յերկրկոմի աշխատանքի մասին ընկ-
Շերողակի արած հաշվետու զեկուցման առթիվ ասել
ե. — «Կոնֆերանսը կուսկազմակերպության առաջ կա-
րերագույն խնդիր ե գնում 1934 թվին վերացնել
գյուղատնտեսության հետամնացությունը, ձեռք բե-
րելով բարձր ու կայուն բելք և անասնաբուծության
աճում»:

Անվիճելի փաստ ե հանդիսանում այն, վոր մեր
յերկրամասը 1933 թվին դուրս յեկավ այն ձեղքված-
քից, վորի մեջ գտնվում եր գյուղատնտեսության աս-
պարիզում 1932 թվին։ Նա հիմնականում հաղթահարեց
գյուղատնտեսության վերաբերյալ իր հետամնա-
ցությունը և թևակոխեց 1934 թիվը՝ գտնվելով վե-
րելքում։

Մեր կուսակցության, պրոլետարիատի և բոլոր
աշխատավորների առաջնորդ ընկ. Ստալինի զեկուցումը
կուսակցության 17-րդ համագումարում, կուսակցու-
թյան 17-րդ համագումարի վորոշումները, Յերկրային
կուսկոնֆերանսի վորոշումներն ամբողջ յերկրին և
մեր յերկրամասին հզոր ոպառազինում տվին՝ հետագա

32 SEP 2013

17035

պայքարի, գժվարությունները հաղթահարելու և սոցիալիստական զյուղատնտեսության ասպարիզում հաղթանակներ ձեռք բերելու հոմար:

Այս պայմաններում ծավալվեց 1934 թվի գարնանայնի կամպանիայի նախապատրաստությունը՝ Յուրաքանչյուր բոլցիկ և յուրաքանչյուր կոլտնտեսական գիտեր, վոր ցանքսի արդյունքը կախված կլինի գարնանացանի նախապատրաստվելու աստիճանից: Իսկ գարնանացանը հաջողությամբ կատարելը — նշանակում է բերքի համար մղվող պայքարում հաջողությամբ անցնել գյուղատնտեսական տարվա առաջին ետապը:

Կուսկազմակերպության, խորհուրդների, կոլտնտեսությունների, խորհանութեառությունների և մենատնտեսների առաջ խնդիր եր գրված՝ ժամանակին և բարեխղճորեն կատարել ցանքսի պլանը: Հարց և առաջանում, թե արդյոք մենք գլուխ կբերենք այս խնդիրը: Սա առաջին հարցն ե, վորին մենք պետք է պատասխան տանք՝ հաշիվ տալով 1934 թվի գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:


Մենք կարող ենք հայտարարել, վոր այսորված որը մեր յերկրամասն ամբողջությամբ մոտենում է գարնանացանի պլանը 100 տոկոսով կատարելուն: Սա նշանակում է, վոր մեր յերկրամասը 30—35 որ ավելի շուտ ցանեց քան անցյալ տարի: Հասկառ մշակույթները մինչև ապրիլի 1-ը ցանված ե յեղել 850 000 հեկտար, իսկ անցլալ տարի նույն ժամանակում 200 հազար հեկտար, մինչև ապրիլի 15-ը՝ 1.590 հազար հեկտար, իսկ անցյալ տարի՝ 850 հազար հեկտար. սինչեւ մայսին 1-ը՝ 2 միլիոն հեկտար կամ պլանի 93 տոկոսով ցանեց ապրիլի 1.390 հազար

հեկտար կամ 54 տոկոսով: Այս տարի կարեռագույն մշակույթների ցանքսի պլանը, անցյալ տարվա հետամեմատած, կատարված ե հետեւյալ ժամկետերում: Հասկավորներին այս տարվա մայիսի 10 ին, իսկ անցյալ տարում հունիսի 15-ին: Շաքարածակնդեղինն այս տարվա ապրիլի 25-ին, իսկ անցյալ տարում մայիսի 10-ին: Գենագերչակինն այս տարվա մայիսի 5-ին, անցյալ տարի՝ հունիսի 25-ին: Բամբակինն այս տարվա մայիսի 15-ին, անցյալ տարի՝ հունիսի 5 ին: Արևածաղկինն այս տարվա մայիսի 16—17-ին, իսկ անցյալ տարի՝ հունիսի 20-ին: Ցեղապտացորենի պլանն այս տարվա մայիս 13—15-ին, իսկ անցյալ տարի՝ հունիսի 25-ին: Սակայն սրան պետք է ավելացնել այս, վոր այս տարի մեր յերկրամասը 7—10 որ ավելի շուտ մկսեց ցանել, քան անցյալ տարի, վորպիսի հանգամանքն ազդեց ցանքսի ավելի արագ ծավալման վրա:

Այս բոլոր տվյալները ցույց են տալիս, վոր Ազով Սևծովյան յերկրամասը ցանքսի ժամկետերի աեսակետից հաջողություններ ունի, վորոնց մեջ վըճական դեր խաղացին կուբանի ռայոնները, վորոնք անցյալ տարի հետ եյին մնացել:

Սակայն Հյուսիսային մարզում և մի շարք ուրիշ ռայոններում, գլխավորությամբ կոնստանտինովսկի և Յիմլյանսկի ռայոնների — դրությունն այսպես չե: Հյուսիսային մարզում, կոնստանտինովսկի և Յիմլյանսկ ռայոններում ցանքն անբավարար ե ընթանում և այս ռայոնները դեռ մինչև այսոր չեն կատարել ցանքսի պլանը:

Հյուսիսային մարզում անբավարար ցանքսի պատճառը, նախ և առաջ, հանդիսանում է ցանքափառ վառ նախապատրաստությունը և կազմակերպումը մար-



զային կենտրոնի կողմից, վորն ընդգրկելով միայն տասը ուայոններ, պարտավոր եր ապահովելու ցանքն այս ուայոններում: Սա, մարզային կենտրոնի կողմից պահանջում եր ամենորյա, կոնկրետ, ոպերատիվ աշխատանք, իսկ դրա փոխարեն լինում եյին բազմաթիվ թղթային գրություններ: Հարկավոր եր ուժեղ կերպով ձեռնարկել մարդկանց նախապատրաստությունը կազմակերպելու գործին և տրակտորների ու լծկանի սպառագործմանը և հարկավոր եր վճռական հարված տալ «սառած և խոնավ» տրամադրություններին, վորոնք յերկարաձգեցին ցանքսի ծավալումը Հյուսիսային մարզի ուայոններում: իսկ այս բանը ժամանակին չեր արված մարզային կենտրոնի կողմից:

Դրանից անկախ, պետք են նշել, վոր մենք վար ու ցանքսի ավելի արագ տեմպերի համար յերկրամասում չոգտագործեցինք այն բոլոր հնարավորությունները, վոր ուներ յերկրամասը:

Կոլտնտեսային-զյուղացիական սեկտորում ցանքսատրածության ամենաշատ քանակությունը ցանքած ե յեղել ապրիլի չորրորդ հնգորյակում՝ 400 հազար հեկտար, այն ժամանակ, յերբ մեր հնարավորությունները թույլ եյին տալիս ցանքսի լիովին ծավալման ժամանակաշրջանում անհամեմատ ավելի շատ ցանելու, քան դա յեղել ե անցյալ տարի: Անցյալ տարվա հետ վոչ մի համեմատության մեջ չի կարելի դնել արակտորների և ձիերի գրությունը, կոլտնտեսականների մթերային ապահովածությունը և ամբողջ դործի կազմակերպումը: Քաղբաժինների քաղաքական-կազմակերպչական դերն ել ավելի ամեց և քիչ չեն այնպիսի քաղբաժիններ, վորոնք զյուղում ցույց տվին կուսակցության աշխատանքի լավագույն որինակներ:

Ճիշտ ե, վոր տրակտորների, լծկանի և մարդկանց արտադրողականությունն ավելի բարձր ե յեղել, քան անցյալ տարի: Չնայած դրան, մենք չկարողացանք ձեռք բերել այն, ինչ վոր թույլ եյին տալիս մեզ ձեռք բերելու որյեկտիվ հնարավորությունները: Ինչու: Վորոնիկեակ չկարողացանք հաղթահարել մեր աշխատանքում յեղած բազմաթիվ սուբյեկտիվ թերությունները, ինչպես, որինակ՝ ձգձգվող և հաճախ անվորակ վերանորոգումը, շատ գեղքերում տրակտորների վատ ոգտագործումը և ձիերի, մանավանդ յեզների վատ ինամքը, մեր կազմակերպչական աշխատանքի թույունը և այլն:

Ինձ թվում ե, վոր լուրջ թերություն ե այն, վոր ցանքսի սկզբում, ուշադրությունը հիմնականում կենտրոնացնելով կուբանի վրա, վորտեղ անցյալում ավելի ցայտուն կերպով յերևան յեկավ կուլակային սաբոտաժը, ժամանակին հարկ յեղած ուշագրությունը չդարձրինք մի քանի ուրիշ ուայոնների վրա, առաջին հերթին Հյուսիսային մարզին:

Հյուսիսային մարզի ցանքսի ընթացքն առանձին սրությամբ յերևան հանեց մեր թերությունները գարնանացանը նախապատրաստելու և անցկացնելու գործում, յերևան հանեց այնպիսի թերությունները, վորոնց մենք ժամանակին ինքններս չնկատեցինք և այս պատճառով թերությունները ժամանակին ուղղելու առիթը ձեռքերնից բաց թողինք:

Կենտրոնացնելով պլենումի ուշադրությունը գարնանացանի ասպարիզում ունեցած մեր թերությունների վրա, վոչ մի գեղքում չի կարելի նսեմացնել ունեցած հաջողությունները: Առաջին յերկրային կուսակութերանաը ինդիբ դրեց այնցյալ տարվա համեմատությամբ կրծատել գարնանացանի ժամանակին որին:

դակաս, քան մի յերրորդի չափ։ Այսոր մենք ունենք այսպիսի արդյունք։ յեթե անցյալ տարի ամբողջ յերկրամասում ցանքս անցկացվեց 95 որվա մեջ, ապա այս տարի՝ 60 որում։ Այսպիսով, այս տարի թե շուտ սկսեցինք և թե կարճ ժամանակում ցանեցինք։ Սա Ազով-Սևծովյան յերկրամասի սոցիալիստական գյուղատնտեսության առաջնադաշտումն ե։

Հարց ե ծագում։ իսկ ինչպիսին ե գարնանային աշխատանքների վորակը։ Հայտնի յե, վոր այստեղ վիճակագրական հաշվառք չի կատարվում, վիճակագրությամբ չես ել կարող վորոշել վորակը։ Մենք վորակն ստուգում եյինք դաշտում, աշխատանքի ժամանակ, բնության մեջ։ Հարցի այս կողմը յեղել ե վորդ կուսկազմակերպության, խորհրդների և կոլտնտեսությունների հատուկ ուշադրության առարկան։ Բերելով 1933 գյուղատնտեսական տարվա հանրագումարները, ընկ. Շերողական ասել ե. «Կոլտնտեսության աշխատանքի հիմնական թերությունը նախ և առաջ մնում ե, գյուղատնտեսական աշխատանքների թեև արդեն լավացող, բայց դեռևս վատ վորակը» («Պրավդա», 15 դեկտեմբերի, 1933 թիվ «Վերելքին»)։

Այս գարնանը ցանքան ընթացավ ժամկետի և վորակի համար պայքարելու նշանաբանով։ Թե ժամկետի և թե վորակի տեսակետից դրությունն զգալի չափով լավացավ, վորը սակայն չի կարելի գերազնահատել։ Լավ վորակի փաստերի կողքին, քիչ շեն վատ վորակի փաստերը։ Ավելի ճիշտ արտահայտվելով, շատ են վատ վորակի փաստերը։ Ինչու համար այս տարի վատ վորակի փաստերի մասին ավելի շատ զբեցինք թերթերում։ Վորովինեաւ այս տարի ավելի լավ պայքարեցինք վորակի համար։ Վարը, տափանումը, ցան-

քսը գտնվում եյին լայն հասարակական հսկողության ներքո, յերբ մրցակցողներն ստուգում եյին իրար։ Մենք կարող ենք ասել, վոր վարն, վորովն կանոն, կատարվեց ազգության սահմանված խորությամբ։ Այսուամենայնիվ կան նաև նոսր վարի բազմաթիվ փաստեր, ինչպես որինակ, Հյուսիսային մարզի կաշարսկի և Մալչևսկի ռայոններում։ Սակայն, յեթե անցյալ տարի ձեռքի արորով ցանվեց ցանքատարածության մոտ քառորդ մասը, ապա այս տարի ձեռքի պրորը մի կողմ ե նետված։ Սա փաստ ե, վոր կհաստատի այն յուրաքանչյուր մարդը, վորը մասնակցել ե գարնանազանին։ Օրան զուգընթաց հարկավոր ե նկատել, վոր շատ դեպքերում, մի քանի որով ընդհատում ե տեղի ունեցել վարի ու ցանքսի միջն, վորպիսին հանդիսանում եր ագրոկանոնի խախտում։ Բիշ չեն նաև հողն անբավարար փշելու, սերմերը կատաղելու և այլն փաստեր։ Մեր յերկրամասում ահագին թվով կոլտնտեսություններ պայքարեցին վաղ ժամկետի համար, չմոռանալով նաև աշխատանքի վորակը։ Բայց և այնպես, այստեղ թերագնահատումն անթույլատրելի յե, հիշելով, վոր մեզ մոտ քիչ չեն այնպիսի կոլտնտեսություններ ու խորհունականություններ, վորոնք ունեն գարնանային աշխատանքների վատ վորակի և վորոնք ձգձգեցին ցանքսի ժամկետները։ Վորակի համար մղվող պայքարը ներկանտապի կարերագույն խնդիրն ե։

Մեր յերկրամասը գարնանացանից գուրս ե գալիս դրական արդյունքով, շնորհիվ ՀԿԿ(թ) կենտկոմի և ընկ. Ստալինի ղեկավարությամբ և ոգնությամբ, շնորհիվ կուսակցության Յերկրային կոմիտեյի բոլցեկյան ղեկավարության, շնորհիվ քաղբաժների գործունեության և կուսակցության ույանական կոմիտեների

և խորհրդային մարմինների ղեկավարության ամրացման։ Գալքնանացանի առպարփղում առանձին ղերը պատկանում ե քաղբաժիններին, վորոնք համախմբելով կոլտնտեսային ակտիվին, կազմակերպեցին լայն մասսաների առաջ դրված խնդիրների կատարման համար։

Բոլշևիկյան դարձող մեր կոլտնտեսությունները և սպնիվ աշխատանքի միջոցով ունեոր կյանքի համար պայքարող մեր կոլտնտեսականները, այս գարնանը մի անգամ ևս հաստատեցին կոլտնտեսային կարգերի ամուր և անդրդպի լինելու Դասակարգային թշնամին, ինչպես նախապատրաստության պրոցեսում, այնպես ել գարնանացանի անցկացման ժամանակ փորձեց վիժեցնել դրված խնդիրների կատարումը, բայց ջարդուփշուր յեղափու կուլակային սարոտաժի և մնասարարության գասերը հաշվի առնվեցին կուսկազմակերպության և խորհուրդների կողմից և այս վճռական նշանակություն ունեցավ գարնան յելքի համար։

Ա. ՔԱՂԱՎՆԻ ԿԱՄՊԱՆԻԱՆ

Ներկայումս անհրաժեշտ ե մորիլիզացիայի յենթարկել բոլոր ուժերը և միջոցները՝ քարհանը, ցելերի վարը, խոտհունձը, վաղ սիլոսացումը, բերքահավաքի կամպանիային նախապատրաստությունը հաջողությամբ անցկացնելու համար։ Հենց այս բոլոր աշխատանքների զուգակցումը՝ թույլ չտալով հերթականությունը, վորը զործնականում նշանակում է զործի քայլայում վճռական պայման և հանդիսանում բերքի համար մղվող պայքարություն մորիլիզացիայի պետք ե յենթարկվեն բոլոր ուժերը և վորի կատարումը ավյալ մամենտում վրձուում ե մայիսի և հունիսի յերկրորդ կեսի աշխատանքը։ Այս գիտակցությամբ պետք ե զինվի յուրաքանչյուր կուսկազմակերպություն և խորհուրդ և այս գիտակցությունը պետք ե մեխիմի յուրաքանչյուր բոլշևիկի ուղեղում, վորպեսզի նա կազմակերպել

հանգստացում և ինքնահոս։ Պետք ե ասել, վոր շատ ույշոններում ցանքսի ավարտման և հետագա գյուղատնտեսական աշխատանքների ծավալման միջև անջատում գոյություն ունի։ Սա խոշոր չափով սպառնում է բերքատվությանը։

Յեթե ներկայումս բոլշևիկյան բեկում ստեղծենք մեր առաջ դրված խնդիրները կատարելու գործում, ապա գարնանացանի կամպանիայում ունեցած հաջողությունները զգալի չափով կնսեմանան։ Գարնանը մեր առաջ դրված ե բերքի համար մղվող պայքարի միայն սկիզբը, վորը վճռելու յե ամառվա ամիսներին։ Գարնանը կատարվում ե միայն մի քառորդ մասն այն գործի, վորը պիտի արվի գյուղատնտեսական սեղոնի ընթացքում։ Հենց նույն գարնանը նախորդեց չորս ամյա նախապատրաստություն։ Իսկ այժմ կատարելով աշխատանքներից մի քանիսը, միշտ մնան ժամանակ հարկավոր ե պատրաստվել հետեւյալ աշխատանքներին։

Այդ իսկ պատճառով, ցանքսի կամպանիայից հետո թույլ չտալ վոչ մի ընդմիջում, վճռականապես պայքարել աշխատանքում յեղած վրանե անկազմակերպվածության, դանդաղաշարժության, անձկունության դեմ, բոլշևիկորեն կատարել դրված խնդիրները։ Բերքատվության բարձրացման համար մղվող պայքարը — պիտի կատարեն ի կենտրոնական խնդիր ե, վորի կատարման համար մորիլիզացիայի պետք ե յենթարկվեն բոլոր ուժերը և վորի կատարումը ավյալ մամենտում վրձուում ե մայիսի և հունիսի յերկրորդ կեսի աշխատանքը։ Այս գիտակցությամբ պետք ե զինվի յուրաքանչյուր կուսկազմակերպություն և խորհուրդ և այս գիտակցությունը պետք ե մեխիմի յուրաքանչյուր բոլշևիկի ուղեղում, վորպեսզի նա կազմակերպել

կոլտնտեսալին մասսաներին՝ պայքարելու հետագայում բարձր բերքի հայար:

Ներկա մոմենտը պահանջում ե, վորափեղի բոլոր ուժերը նետվեն քաղեանի մաքուր ցելեր վարելու վրա: Առանց մոլախոտերի վոչնչացման, չի կարելի լավ բերք ունենալ, իսկ մոլախոտերի տեսակետից մեր յերկրամասը առաջին տեղերից մեկն ե գրավում Միության մեջ: Մոլախոտերը, վորոնց տեսակները մեզնում հարյուներով են հաշվում, չափազանց շատ են:

Մեզանում մեծ չափով տարածված են այնպիսի գարշել մոլախոտեր, ինչպիսին են տատասկը, կորնդան, հասարակ եղածաղիկ (ԿԵՐԻՈԲԵԼ), խոզախոտ (СВИНОРОДЫ) և այլն: Հստ վորում մոլախոտերի հիմնական տեսակներն ամբողջ յերկրամասում գանազանց չափով են տարածված: Զանազան տեսակի մոլախոտերի զեմ պայքարելու համար, աղբոնոմիական գիտությունը տալիս ե իր զեղատոմսերը: Սակայն մեզ մոտ մոլախոտերի դրությունն այնպես ե, վոր բավական չե միայն մոլախոտերի զանազան տեսակների զեմ զեղորայքներ գործածելը, այլ հարկավոր ե ապահովել աղտոտված մշակովի բույսերի համատարած քաղեանը և ցելերի բարձրացման լայն կիրառումը, խոզանների ծանծաղավարը և աշնանավարը: Առանց այս միջոցառումների՝ հնարավոր չե համնել բարձր և կայուն բերքի:

Մոլախոտերի զեմ պայքարելու հարցն ուժեղ կերպով դեց ընկ. Լարինը յերկրային առաջին կուսկոնքերանսում: Այժմ մայիս—հունիս ամիսն ե, վորը մեզանից պահանջում ե գործով անցկացնել այս պայքարը: Այնինչ, յերեան են գալիս այնպիսի տրամադրություններ, վոր այս տարվա պայմաններում, յերբ

յեղանակը չորային ե, մոլախոտերն ավելի քիչ են, դրա համար ել այս հարցը նախկին սրությունը չունի: Այնպիսի դատողությունները մերը չեն, այլ մեր թշշնամիներին, մանավանդ այս գարնան կիմալական պայմաններում: Գործի եյությունն այն ե, վոր առավելագույն չափով ոգտագործել հողում գտնված խոնավության պաշարները՝ մշակովի բույսերի զարգացման համար, թույլ չտալով, վորպեսզի մոլախոտերը վատնեն խոնավությունը: Մեր լոգունգն ե—մոլախոտերին խոնավությունը չտալ: Սա նշանակում է ժամանակին և լավ կատարել աշնանացան և գարնանացան մշակույթների քաղեանը, թույլ չտալով մոլախոտերի աճումը: Դրա համար ել, այժմ հարկավոր ե իսկական բոլցերի կյան պայքար մղել քաղեանն անցկացնելու համար: Այսպիսի պայքար շատ տեղերում դեռ չկա:

Գետք ե հիշել անցյալ տարվա գասերը, յերբ շարատունկ-տեխնիկական մշակույթների վատ մշակման պատճառով, այս մշակույթներն զգալի չափով փշացան և ցածր բերք տվին: Հացահատիկային մշակույթները լավ բերք տվին: Դրան նպաստեցին վոչ միայն կիմայական բարեհաջող պարմաները, այլ նաև հասկավոր մշակույթների անցկացված քաղեանը: Միանույն ժամանակ, շարատունկ-տեխնիկական մշակույթների քաղեանը բոլորովին անբավարար եր, իսկ շատ տեղերում ուղղակի տապալվեց: Յեթե վերցնելու լինենք 1933 թվի քաղեանի տվյալները վոչ թե առ մականի 15-ը կամ հունիսի 15-ին, այլ առ հուլիսի 1-ը, ապա այսպես եր պատկերը. շաքարաճակնդեղի քաղեանը կատարված եր 97 տոկոսով, բամբակինը՝ 65, ծխախոտինը՝ 36, արևածաղկինը՝ 45, յեգիպտացորենինը՝ 30 տոկոս: Շարատունկ-տեխնիկական մշակույթ-

Ների անցյալ տարվա քաղհանի արդյունքը միանգա-
մայն անհանդուժելի յեւ:

Իսկ ինչպես ե անցկացվում քաղհանն այս տարի:
Նախ և առաջ պետք ե նկատել, վոր 1933—34 տարվա
ձևեռային շրջանում և անցած նախացանքսային շրջա-
նում դաշտերը մաքրվեցին չոր մոլախոտերից և բո-
դիլներից 2 միլիոն հեկտար տարածությամբ: Սա թե՛ն
մեծ թիվ ե, բայց գործը լավ հիմքերի վրա դնելու
դեպքում, կարող եյինք ավելի մեծ թիվ ունենալ: Իսկ
հիմա խնդիրը վոչ թե անցյալ տարվա չոր մոլախո-
տերի և բոդիլների մասին ե, այլ կենսունակ և կա-
նաչ մոլախոտերի, վորոնք որեցոր ավելի և ավելի յեն
աճում, վորոնք խոլում են հողի խոնավությունը, իսկ
նրանց դեմ պայքարն այժմ անբավարար ե:

Մինչև մայիսի 10-ը կոլտնտեսությունների կող-
մից հասկավոր մշակույթները քաղհանված ե 725.000
հեկտար և խորհունտեսությունների կողմից՝ 20.000
հեկտար, շաքարաճակնդեղը՝ (գնդածաղիկ) 3570 հեկ-
տար կամ 19 տոկոս, արևածաղիկը՝ 6.430 հեկտար
կամ փաստորեն քաղհանը չի սկսված, իսկ գենագեր-
շակը և յեզիւտացորենն առայժմ առանձին դեպքե-
րումն են քաղհանվում:

Քաղհանի ասպարիգում ամենահետամսաց ուայն-
ները հանդիսանում են Մեջոտինսկի, Ազովյան, Ռո-
ւորդինսկի ուայնոնները և առաջից են գնում Կրա-
սուտկինի, Կորենովսկի, Ուստ-Լարինսկ ուայնները,
վորոնք նույնպես գարնանացանի առաջավորներ եյին
հանդիսանում:

Քաղհանի, մանավանդ հասկավորների քաղհանի
ընթացքը պետք ե համարել անբավարար և սպառնա-
լից, յեթե այս գործն ուժեղ կերպով իրենց ձեռքը
չփերցնեն կոլտնտեսություններն ու խորհունտեսու-

թյունները, վորոնք (խորհունտեսությունները) չափա-
գանց հետ են մնում քաղհանի ասպարիգում:

Վճռականապես պետք ե պայքարել նրանց գեմ,
ովքեր չեն կատարում քաղհանն առանձին հողամա-
սերում մոլախոտերի յերեան գալու մոմենտից, այլ
սպասում են, մինչև վոր մոլախոտերն աճեն ամբողջ
տարածության վրա: Պետք ե խսկույն նայել դաշտը
և սկսել քաղհանն ամենաաղտոտված հողամասերից:
Առանձին ուշադրությամբ պետք ե անցկացվի հաս-
կավոր մշակույթների քաղհանը, վորպեսզի վոչ թե
մոլախոտերին, այլ նրանց տրվի հողի խոնավությունը:
Այս ցանքսատարածություններում, վորտեղ քաղհա-
նից հետո սկսում են մոլախոտեր բուսնել, անհրա-
ժեշտ ե կատարել կրկնակի և յեռակի քաղհան, այն
հաշվով, վոր այդ արված լինի մինչև հասկավորների
ցողնակալելը: Այս տարի հասկավորների քաղհանը
բացառիկ նշանակություն ունի հացարույսերի բերքի
համար և նա պետք ե անցկացվի հարվածային թա-
փով և մոլախոտեր ունեցող բոլոր ցանքսատարածու-
թյուններում:

Սրան զուգընթաց, պետք ե ապահովի շարա-
տունկատելինիկական մշակույթների ժամանակին և
լավորակ մշակումը, առանձնապես նկատի առնելով
մեր յերկրամասի հսկայական գերը այնպիսի մշա-
կույթների ասպարիգում, ինչպիսին են գենագերչակը
և ծխախոտը: Մենք չենք կարող այլևս ահազին զնաս
քաշել բամբակի պատճառով և պետք ե ճակնդեղի
բարձր բերք տանք: Մեզ հարկավոր ե յեզիւտացո-
րենի, արևածաղիկի, կարտոֆիլի և բանջարեղենների
լավ բերք: Այդ խսկ պատճառով քաղհանի աշխատանք-
ները պետք ե անցկացվեն սահմանված ագրոկանոնների
համաձայն, այսինքն՝ ժամանակին և լավ: Ըստ վորում

անհրաժեշտ ե կատարել վոչ միայն յերկուսից մինչև յերեք քաղհան, այլ և ավելի, նայած մոլախոտերի յերևան գալուն:

Շարատունկ-տեխնիկական մշակույթների առաջին քաղհանը հարկավոր ե լիովին ավարտել մայիսի վերջերին և ծավալել յերկրորդ քաղհանը հունիսի սկիզբներին:

Շարատունկ-տեխնիկական կուլտուրաների մշակման կամպանիան իր մասշտաբով վիթխարի կամպանիա յե հանդիսանում: Շարատունկ-տեխնիկական մշակույթների ցանքսի տարածությունը 1.625 հազար հեկտար լինելով, քաղհանի աշխատանքների ծավալը, յուրաքանչյուր մշակույթի համար հաշվելով 2—3 քաղհան, մոտենում ե կոլտնտեսային-գյուղացիական սեկտորի գարնանացանի տարածության չափին: Յեթե ցանքսի համար վճռական նշանակություն ունի քաշող ուժը, ապա քաղհանի համար — մարդու աշխատանքը: Խոսքը վերաբերում ե հարյուր հազարավոր մարդկանց աշխատանքի կազմակերպմանը: Սրա համար հարկավոր ե միայն կազմակերպել կոլտնտեսականների և կոլտնտեսուհների մասսաներին: Յեթե ասում են վորեե տեղ մարդիկ չեն բավականանում, ապա այդ նշանակում ե, վոր չի բավականանում մարդկանց կազմակերպելու ընդունակությունը: Պետք ե մերկացնել և վճռականորեն պայքարել նրանց դեմ, ովքեր ուզում են իրենց վատ աշխատանքը քողարկել մարդկանց չբավականանալու մասին արված դատողությամբ:

Քաղհանի կամպանիայի հաջողությունը կախում կունենա շարատունկ-տեխնիկական բույսի մշակման համար մեքենաներ կիրառելու ասպարիզում մեր ունեցած հնարավորություններն ոգտագործելուց և

մարդկանց աշխատանքի համար անհրաժեշտ պայմանները ստեղծելուց: Շարքամիջյան տարածությունները մշակելու համար մենք ունենք բավական քանակությամբ կուլտիվատորներ, սակայն մենք նրանց գործադրում ենք անբավարար չափով: Մարդու աշխատանքը չենք փոխարինում ձիով և տրակտորով այնտեղ, ուր այդ հնարավոր ե անել: Դրա համար, Յերկրոգործկոմի և Յերկրկոմի այս տարվա ապրիլի 4-ի՝ «Քաղհանի անցկացման մասին» կայացրած վօրոշման մեջ հատկապես առաջ եր քաշված այս մոմենտը: Այս տարի շարքամիջյան տարածությունների մշակումը ձիով և տրակտորի ուժով, պետք ե կատարվի վոչ պակաս, քան քաղհանային տարածության կեսի վրա: Սրա համար մեզ մոտ բավականանում են ձիերը և տրակտորները: Սակայն, բույսերի շարքերում կատարվող աշխատանքը, վորը զիսավոր և վճռական ե հանգիստանում, անպայման ձեռքով պետք ե կատարվի, հակառակ դեպքում չենք վոչնչացնի մոլախոտերը: Այդ իսկ պատճառով, քաղհանի ժամանակ մարդկանց մասին ավելի շատ պետք ե հոգս տանել, քան ցանքսի ժամանակ: Դաշտակայանների բարեկարգությունը, մանկամառների և մանկահրապարակների, հասարակական մանդի կազմակերպումը, կոլտնտեսականների անսառունների արածացնելու, կոլտնտեսականների տըները պահպանելու գործի կազմակերպումն — այս բուրը վճռելու յեն քաղհանի հաջողությունը: Մինչդեռ, գործի այս կողմը շատ դեպքերում անբարար ե մնում: Այդ իսկ պատճառով այժմ կուսկազմակերպությունների և խորհրդային մարմինների առաջնակարգ պարտականություններ և ապահովել այն բոլոր պայմանները, վորոնք անհրաժեշտ են կոլտնտեսականների և կոլտնտեսուհների աշխատանքի համար:


Քաղհանի աշխատանքների համար ուժերը ճիշտ դասավորելու, աշխատանքը ճիշտ կազմակերպելու և նրա արտադրողականությունը բարձրացնելու նպատակով, ինչպես հայտնի յե, ըրիգադի ներսում պետք է կազմակերպեն ողակներ, այնպես վոր յուրաքանչյուր ողակին ամրացվի շարատունկ-տեխնիկական մշակույթների ցանքսի վորոշ հողամաս այն հաշվով, վոր մինույն ողակը ամրացված հողամասում կատարի հաջորդ բոլոր գյուղատնտեսական աշխատանքները, ինչպես քաղհանի, այնպես ել բերքահավաքի վերաբերյալ: Այս միջոցառումը հարված է հասցնում գիւմազրկության:

Դեռ ավելին. այժմ քիչ չեն այնպիսի կոլտնտեսություններ, վորոնք փորձ են անում ողակի ներսում, քաղհանի վրա աշխատող կոլտնտեսականների համար նշանակել վորոշ քանակությամբ շարատունկտեխնիկական մշակույթների շարքեր՝ որվա արտադրանքի նորմայի չափով: Փորձը ցույց է տալիս, վոր այս միջոցառումը տալիս է լուրջ արտադրական եֆեկտ և պահանջում է խրախուսանք: Բայց սա քիչ է: Քիչ չեն դեպքեր, յերբ քաղհանի արտադրանքի նորմաները բոլոր հողամասերի համար միատեսակ են սահմանվում, անկախ աղտոտվածության բնույթից և աստիճանից: Սա վոչ մի բանի պետք չե, քանի վոր գործի այսպիսի դրվածքը վոչ թե աջակցում, այլ վիճեցնում և քաղհանը: Իր աշխատանքում վոչնչով չի շահագրգուված նա, ով քաղհանելու համար ստանում է չափազանց աղտոտված հողամաս: Դրա համար ել հենց մինույն աշխատանքն աշխարերով գնահատելիս, անհրաժեշտ ե գործնականում տարբերություն դնել նորմաների միջև և այն ժամանակ մենք կապահովենք քաղհանի աշխատանքների հաջողությունը: Միանգա-

մայն բացահայտ ե, վոր քաղհանը պահանջում է աշխատանքային ուժեղ կարգապահություն և աշխատանքի կանոնների խիստ պահպանում:

Քաղհանումը զվարակությունը և վճռականը—դա աշխատանքի վորակն ե: Մինչդեռ, քաղհանի առաջին շրջանը լուրջ ահագանգ է խփում քաղհանի, առաջին հերթին հասկավոր մշակույթների քաղհանի վատ վորակի փաստերի մասին, յերբ փաստորեն քաղհանը կատարվում է տեսքի, աչքին փոշի փշելու համար, յերբ քաղհանված համարվող ցանքսատարածություններում գեռ մնում են ահագին քանակությամբ մոլախոտեր: Որինակ, Յերկրիողվարչության կողմից կատարված քաղհանի ընթացքի ստուգումը կոլտնտեսություններում տվեց հետևյալ փաստերը: 1) «III ինտերնացիոնալ» կումունայում (Մայկոպի ՄՏԿ) աշնանացան ցորենի քաղհանված տարածության վրա չի վոչնչացված գեշ մոլախոտը—կաղանչանը (МОЛОԿԱՅ): 2) Շկուրինսկի ՄՏ կայանի «Կրամնայա Ցեյա» կոլտնտեսության № 1 բրդգաղում ցորենի քաղհանի համար գործածվում եյին բրիչներ, մոլախոտերի զգալի մասը չքաղհանվեց: 3) Կոնոկովսկի ՄՏ կայանի «Վորոշիլովի» անվան կոլտնտեսությունում քաղհանից հետո մնացին տատասկ, թզուկ (బօօօհԱԿ) և ուրիշ մոլախոտեր. 4) Գուլկեվչսկի ՄՏ կայանի «Էլենինի պատգամ» կոլտնտեսությունում ՄՏ կայանը հաղորդեց, վոր հասկավորների քաղհանն ավարտված է, իսկ գարու ցանքսերն ստուգելիս հայտնաբերված է զգալի քանակությամբ տատասկ:

Այս փաստերը, ինչպես նաև քաղհանի վատ վորակի վորես փաստ չի կարող անպահպան մնալ, սակայն հիմնական յերբ կայանում և նրանում վոր լա-



վրակ քաղհանի համար մենք ուժեղ կերպով պետք ե պայքարենք և սա հանդիսանում ե վողջ քաղհանային կամպանիայի կենտրոնական հարցը։ Առանց վրակի չկա քաղհան և չկա պայքար մոլախոտերի դեմ և գործնականում աշքակապություն ե դուրս գալիս։ Դրա համար ել լավորակ քաղհանի համար վոտքի պետք ե հանել կոլտնտեսականների լայն մասսաներ։ Քաղհանի թերագնահատման ամենաչնչին դեպքը պետք մերկացնել և այս գործում հակայական դեր պետք ե խաղան քաղբաժինները։ Բոլ թերագնահատումը յերեւան ե գալիս վոչ միայն մի շարք կոլտնտեսությունների, այլ նաև մի շարք խորհունտեսությունների կողմից։ Այդ իսկ պատճառով ել, այժմ մենք խիստ պահանջներ պետք ե ներկայացնենք նաև խորհունտեսություններին, գուղղորհութեղների և կոլտնտեսությունների վարչությունների կողմից ոգնություն ցույց տալով նրանց՝ քաղհանի աշխատանքների համար մենատեսներ և կոլտնտեսականներ ճարելու գործում։

III. ՅԵԼ ԱՆԵԼԸ

Քաղհանն անցկացնելու հետ միաժամանակ պետք ե կատարվի նաև մաքուր ցելերի վարը։ Մաքուր ցելերը, մանավանդ վաղ ցելերը, մեծ դեր են խաղում մշակույթների բերքատվությունը բարձրացնելու և մոլախոտերի դեմ պայքարելու ասպարիզում։

Մաքուր ցելերի դերը մեր յերկրամասի զանազան ռայոններում միատեսակ չե։ Չորային և քիչ խոնավային ռայոններում, վրտեղ աշունը կարճատեն և ցուրտ ե լինում, իսկ ձմեռը ցուրտ, մաքուր ցելերը վճռական նշանակություն ունեն աշխատանքների հացարույսների լավ զարգացման և ձմեռելու համար։ Հարավա-

յին, ավելի խոնավ տաք ռայոններում, վորտեղ աշունը յերկարատեն և լինում, մաքուր ցելերի՝ վորպես աշնանացան մշակույթների նախորդողների՝ արդյունավետությունը ժխտվում ե լավ մշակված վարովի ցելերով։ Այս ցելերի նշանակությունը, Մերձկուբանի պայմաններում, առանձնապես մեծանում ե, յեթե նկատի ունենանք ցելերում ցանված մշակույթներից ստացվելիք լրացուցիչ միջերքը։

Փորձնական կայանների մի շարք տարիների տըվյալների համաձայն, մաքուր ցելեր հետեւյալ արդյունքն ե տալիս զանազան ռայոնների համար։

Աշնանացան ցորենի բերքը (ցենտներով)	Մաքուր ցե- լի գրա	Արևածաղ- կի գրա	Զցելած հողի (հացարույ- սների) գրա
Դոնեցյան փորձակայան	16,8	14,4	6,1
Յեյսկի	»	14,6	12,0
Կուբանի	»	21,2	20,0
			17,7

Մենք մաքուր ցելերի նշանակությունը համեմատեցինք արևածաղկի հետ, վորպես մեր յերկրամասում ամենամեծ չափով տարածված շարատունկ մշակույթ։

Սրա հետ մեկտեղ, փորձակայաններում կատարված դիտողությունները հաստատել են, վոր մաքուր ցելեր արված հողամասերում աշխանացան մշակույթների դաշտերը մոլախոտերից ամենաշատ մաքրված դաշտեր են լինում։ Այսպես, Կուբանի կայանի փորձերն ասում են, վոր մաքուր ցելերի վրա ցանված աշխանացորենի ցանքսի մի քառակուսի մետրի վրա գտնված մոլախոտերի քաշը 1,8 գրամ ե, յեգիպտացորենի վրա ցանվածինը՝ 7,2 գրամ ե, գարնանացորենի վրա ցանվածինը՝ 38,5 գրամ ե։ Սա ցույց է

տալիս, վոր դաշտերի չափազանց աղտոտվածության պայմաններում անհրաժեշտ ե տվյալ ետապում ամենուրեք, վորտեղ կան պահեստի հողեր, մաքուր ցելեր կատարել: Մերձկուրանում, վորտեղ կան գեղ մոլախոտերով (տատասկ, աժինա, թզուկ) չափազանց աղտոտված բավականաշատի հողեր, վորպես արմատական միջոց, ներկայումս պետք ե կիրառել մաքուր ցելեր, վորպեսզի գաշտերի դրությունը լավանա:

Յերկրային պլանի համաձայն, մաքուր ցելերը քիչ քանակությամբ սահմանված են կուբանի համար, իսկ հիմնական տարածությունն ընկնում ե հյուսիսային և արևելյան ույաններին: 1934 թվի համար պլանով սահմանված ե կոլտնտեսային-գյուղացիական սեկտորում 500 հազար հեկտար ցել անել, անցյալ տարվա 200 հազարի փոխարեն: Իմիջի այլոց կասեմ, վոր աշնանավարի պլանն այս տարի նախատեսնված ե մեկ միլիոն հեկտար կոլտնտեսային գյուղացիական սեկտորում, անցյալ տարի կատարած աշնանավարի 390 հազար հեկտարի փոխարեն: Յելի, և աշնանավարի համար պետք ե պայքարել բոլշեիկյան ամբողջ ուժով, քանի վոր սրանից ե կախված 1935 թվի — յերկրորդ հնգամյակի յերրորդ տարվա բերքը:

Յերկրգործություն ու Յերկրկոմը սահմանել են մաքուր ցելերի պլանը կատարելու ժամկետը կուբանի ույանների համար վոչ ուշ քան հունիսի 15-ը և հյուսիսային ու արևելյան ույանների համար վոչ ուշ քան 15 որ՝ ցանքսի ավարտման ժամանակից սկսած: Սա նշանակում է, վոր հյուսիսային և արևելյան ույանները մաքուր ցելերի պլանը պետք ե կատարեն մինչև հունիսի մեկից մինչև հինգը, սակայն վախ կա, վոր ցանքսի նման, հյուսիսային ույանները ձգձգեն ցելերի վարը:

Մինչև մայիսի 10-ը կոլտնտեսային-գյուղացիական սեկտորում արված ե 100 հազ. հեկտար մաքուր ցել կամ պլանի 20 տոկոսից պակաս: Ըստ վորում, յեթե կորենովսկի ույոնը կատարել ե պլանը, կանովսկի ույոնը մոտենում ե պլանի կատարմանը, Կրասնոդարի ույոնում լավ ե ընթանում ցելերի կատարումը, ապա Հյուսիսային մարզը փաստորեն չի սկսել մաքուր ցել անելը: Ինչպես տեսնում եք, վտանգ ե սպառնում հյուսիսային ույոնների կողմից, վորոնց վրա ընկնում ե ցելերի պլանի հիմնական մասը:

Ցել անելու պլանը, 500 հազ. հեկտար — դա այն տարածությունն է, վորը կոլտնտեսային-գյուղացիական սեկտորի կողմից ցանվել ե այս գարնանը. մի հնգորյակում: Այս խնդիրը միանգամայն իրագործելի յե, յեթե վերացնենք ինքնահոսը և բոլշևիկորեն ձեռնամուխ լինենք նրա կատարմանը: Հատուկ ուշադրություն պետք ե դարձնել Հյուսիսային մարզի վրա, վորտեղ ցելերի վարը գեռ չի ծավալված և այս մարզին ցույց պետք ե տալ ամենայեռանդուն ոդնություն:

Բավական չե միայն ցել անելը, այլ հարկավոր ե նաև նրանք մշակել: Այս ասպարեզում ունենք անցյալ տարվա դառն փորձը, յերբ ցելերի վարը փաստորեն վիճեց թե քանակի և թե գլխավորապես վորակի տեսակետից, վորի պատճառով ցել արած տարածությունը վերածվեց մոլախոտերի տնկարանի: Պետք ե խոստովանել, վոր անցյալ տարի պլանը վիճեց՝ մաքուր ցելերի գերը թերագնահատելու հետևանքով: Այդ իսկ պատճառով այս տարի, անցկացնելով ցելերի խորունկ վարը, անհրաժեշտ ե ապահովել վոչ պակաս՝ քան յերկու մշակում, թույլ չտալով, վոր ցելերը մոլախոտերով ծածկվեն: Ինչպես քաղհանի, այնպես ել ցել անելու գործում կենտրոնական հարցը վորակն ե:

Ինչպես ցելերը վատ վարելու, այնպես ել նրանց աղառտվելու համար, հանցավորներն իսկույն պետք ե խիստ պատասխանատվության յենթարկվեն։ Մեր յերկրամասի բոլշևիկների և կոլտնտեսականների պատվի գործն ե լավ անցկացնել և՝ ցելեր և՛ քաղհանի կամ պանիաները։

IV. ԽՈՏԱԿԱՎԱՐԸ ՅԵՎ ՍԻԼՈՍԱՅՈՒՄԸ

Մայիս—հունիս ամիսներին մարտական խնդիր ե հանդիսանում վոչ միայն ցել անելը և շարատունկների մշակումը, այլ նաև խոտահավաքը։ Այս բոլոր աշխատանքները պետք ե կատարվեն մինչև հացահատիկային մշակույթների բերքահավաքի ծավալումը, այլապես զլուխ չենք կարող բերել հետեւյալ աշխատանքների կատարումը սահմանված ժամկետերում և դրա հետ մեկտեղ չենք կատարի խոտահավաքի պլանը։

Խոտահավաքը, ինչպես նաև վաղ սիլոսացումը մոլախտերի հաշվին (կորնգան, թայլ (լեబեդա), բոշ (օօօկա) և այլն) հանդիսանում են 1934 թվի գյուղատնտեսական տարվա առաջանահերթ խնդիրը՝ անառուններին ձմեռվա կերով ապահովելու գործում։ ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը և ՀԿԿ(Բ) կենտկոմը (1933 թ. մայիսի 24-ի վորոշումը) 1933 թվի համար այսպիսի խնդիր դրին։ «Այս տարի յուրաքանչյուր կոլտնտեսության և խորհանտեսության մեջ ստեղծել խոտի և սիլոսի պաշարներ, փորոնք վոչ թե միայն լիովին բարականացնեն ամբողջ համայնացված և չհամայնացված անասունների կերի պահանջը, այլ նաև խոտի և սիլոսի անձեռնմխելի պաշարների ստեղծումը գարնան համար»։ Արդյոք մեր յերկրամասը կատարեց այս ինդիրը, թե վոչ վաչ, չկատարեց։ Անցյալ տարի խոտ-

հուձը անբավարար ե կատարված։ խոտհնձի պլանը սահմանված ժամկետում չկատարվեց, խոտահավաքը ձգձգվեց և այն հետևանքն ունեցավ, փոր հնձվածի միայն 78 տոկոսը դիզգվեց կամ չդիզգված մնաց 250 հազար հեկտար։

Որինակի համար, կոնստանտինովսկի ռայոնում չդիզգված մնաց 32 հազար հեկտար հնձվածից 7 հազար հեկտար, Մորոզովսկի ռայոնում՝ 45,2 հազ. հեկտար հնձվածից՝ 14 հազար հեկտար, Նովչերկասկի ռայոնում 27,7 հազ. հեկտարից՝ 8,5 հազար հեկտար։ Միանգամայն համանալի իւ, փոր այսպիսի խոտահավաքից յեզն առողջ չեր կարող լինել։

Այս տեղի ունեցավ նրա համար, փոր խոտահավաքը ծավալվեց միայն հունիսի յերկրորդ կեսին, մտավ հացաբույսերի բերքահավաքի մեջ և, ինչպես ասում են, «հնարաւկորության չափով» կատարվեց նույնիսկ ոգոսուումն։ Այսպիսի գրությունը հետևանք ե այն բանի, փոր խոտահավաքի համար իսկական պայքար չտարվեց և հաճախ նա անցկացավ ինքնահոսով։

Վոչ թե լավ, այլ վատ կատարվեց սիլոսացումը։ Անցյալ տարի սիլոսացումը կատարվեց միայն 44 տոկոսով։ Այս գործին քիչ ուշադրություն դարձվեց, իսկ հաճախ նրա մոտով անցան։ Անցյալ տարին մեզ համար լավ դաս պետք ե հանդիսանա։

Կուսակցության 17-րդ համագումարում ընկ. Սատկինն ասաց. «Վոր անասնասնապահության պրոբլեմը այժմ հանդիսանում ե այնքան առաջնակարգ պրոբլեմ, ինչպես արդեն յերեկ հաջողությամբ լուծված հացահատիկի պրոբլեմն եր»։ Այս խնդիրը, փորը դրված ե առաջնորդի և կուսակցության կողմից, պետք է կատարվի ինչ գնով ել փոր լինի և անասնապահության զարգացումը պետք ե ընթանա արագ տեմպերով։

Անասնաբուծության խնդիրներն իրագործելու
նպատակով, Յերկրգործկոմը և Յերկրկոմը 1934 թվի
համար սահմանել են մեր յերկրամասի անասնաբու-
ծության զարգացման պլան, մշակված են կոլտնտե-
սային անասնաբուծության աշխատանքների կազմա-
կերպության վերաբերյալ միջոցառումներ, անասնա-
բուծության զարգացման համար ուժեղացված են
նյութական ազդակները և այլն։ Մեր ոպերատիվ աշ-
խատանքում հատուկ ուշադրության առարկան այժմ
հանդիսանում է բեղմանավորման կամպանիայի անց-
կացումը, լծկանի ավելացումը կոլտնտեսություննե-
րում, կոլտնտեսականների կողմից հորթեր ձեռք բե-
րելը և այլն։ Քանի վոր այս հարցերն անմիջապես
չեն մտնում իմ զեկուցման թեմայում, դրա համար
յես ստիպված եմ սահմանափակվել միայն ընդհանուր
դիտողություններով։ Հունիսի կեսերին կկայանա
անասնապահության վերաբերյալ յերկրային համադու-
մար, վորը մանրամասն և գործնական քննության և
յենթարկելու անասնաբուծության բոլոր կարևոր
հարցերը։

Պետք ե ասել, վոր գեռ ինչպես պետքն ե մեր ձեռքը
չենք վերցրել անասնաբուծությունը։ Յեթե յերկրա-
մասում վորոշ աշխատավություն նկատվեց, ապա ուայնո-
ներում, իբրև կանոն, արդարանալով գարնանցանի
անցկացումով (իսկ սա վորպես արդարացում չի կա-
րող ծառայել), փաստորեն գործն ամուր կերպով իրենց
ձեռքը չերցրին։ Շատ դեպքերում բեղմնափորման կամ-
պանիան ինքնահոսով ե ընթանում, կոլտնտեսություն-
ների լծկան ուժը լրացնելու համար կոլտնտեսական-
ների և աենատնտեսների հետ կոնտրակտացիա կապե-
լու և աջառներ գնելու գործը չը ծավալվեց, անցյալ
ուարում կոլտնտեսականների և մենատեսների մոտ

կոլտնտեսականների միջից կովազոկությունը վերաց-
նելու համար կոնտրակտացիայի հորթերը դեռ մինչեւ
այժմ չեն հանված կոնտրակտացիայից։ Յերկրգործկոմն
ու Յերկրկոմը, կուսակցական և խորհրդային վերահսկո-
ղության լիազորները մի քանի որ առաջ այս բոլոր
հարցերը քննեցին և ընդունեցին համապատասխան վո-
րոշումներ, վորոնք պետք ե մոտ որերս, ինչ գնով ել
վոր լինի, կատարվեն հողմարմինների, խորհրդակ-
րի և ռայդործկոմների կողմից։

Անասնապահության համար առանձին պատասխա-
նատվությունն ընկնում է հողմարմինների վրա։ Իսյ-
հողբաժինների վրա գրվում է ուայնում անասնապա-
հության գործի ոպերատիվ ղեկավարության պարտա-
կանությունը։ Սակայն պետք ե նկատել, վոր հողային
մարմինները մինչեւ այժմ այս գործը վատ են տա-
նում։ Հողային մարմինները պարտավոր են իսկույն
բոլշևիկորեն ձեռնարկելու անասնապահությունը զար-
գացնելու գործին, իսկ սրա ստուգումը հանդիսա-
նում է այժմ բեղմնափորման կամպանիայի, խոտանա-
վաքի և սիլոսացման անցկացումը։

Յերկրգործկոմն ու Յերկրկոմը սահմանել են խո-
տանավաքի պլան՝ 1.132 հազար հեկտար տարածու-
թյամբ, վորից բնական խոտանարգները կազմում են
1.005 հազար հեկտար, իսկ ցանովի խոտերը՝ 127 հազ.
հեկտար։ Սահմանված ե նաև սիլոսացման պլան
316.000 տոննի չափ, վորից վաղ սիլոսացումը կա-
մում է 107 հազար տոնն։ Այս պլանները նվազա-
գույն լինելով՝ վոչ միայն պետք ե կատարվեն, այլ
նաև գերակատարվեն։ Դրա համար ել այժմ պետք ե
պայքարել այն բանի համար, վորպեսզի յուրացվեն բո-
լոր խոտհարքի տարածությունները և վոչ մի կտոր
սուանց հնձելու, հավաքելու և պահելու չթողնել։

Պետք ե ասել, վոր մինչև հիմա մի շարք ռայոններում խոտահավաքի և սիլոսացման պլանները չեն հաղորդված ՄՏ կայանները, կողտնտեսություններին և գյուղինորհրդներին և կողտնտեսությունների խոտահավաքի հողամասերը չեն բաժանված բրիգադների միջև: Մոտ որերում անհրաժեշտ ե այս գործը կատարել, ինչպես նաև բրիգադներում անհրաժեշտ թվով կողտնտեսականներ, քաշող ուժ և ինվենտար առանձնացնել խոտահավաքի և սիլոսացման համար:

Վճռական հարցը հանդիսանում ե խոտահավաքի և վաղ սիլոսացման ժամկետը լրիվ և ժամանակին վերջացնելը: Խոտահանունձը պետք ե սկսել նախքան ծաղկելը, յերբ խոտերը կանգնում են, այսինքն՝ մոտավորապես մայիսի 25-ից հետո: Խոտահավաքի ամբողջ պրոցեսը, հնձելուց սկսած մինչև դիզման ավարտումը պետք ե ավարտվի մի ամսվա ընթացքում: Դրա համար ել ամբողջ խոտահավաքի ավարտման ամենավերջին ժամկետը պետք ե սահմանվի հուլիսի 1-ը:

Վաղ սիլոսացումը պետք ե կատարվի մոլախոտերի հաշվին, իսկ մոլախոտերը, ինչպես հայտնի յե, չափազանց շատ են: Բավականանում ե կորնգանը, թայլը, բոշխը և մատղաշ յեղեգները և այլն: Այժմ այս մոլախոտերի մասին աճում են և մոտավորապես մայիսի վերջից սկսած հնձելու միջոցով կարելի յե ստանալ սիլոսի համար անհրաժեշտ նյութեր: Այդ պատճառով ել վաղ սիլոսացման պլանի կատարման վերջին ժամկետը պետք ե նշանակվի հուլիսի 10-ը, այս ժամկետում հաշվի առնելով անհրաժեշտ ժամանակ՝ սիլոսային զանգվածը պատրաստելու համար:

Խոտահավաքի և վաղ սիլոսացման, իսկ այնուհետեւ ուշ սիլոսացման ժամկետի համար պետք ե պայքարել այնպես, ինչպես այդ վայել ե բոլշեկուներին: Խո-

տով և սիլոսով մենք պետք ե ապահովենք անասունին ինչ գնով ել վոր լինի:

Դրված խնդիրը պիտի կատարվի և կոլտնտեսությունների, յեւ խորհնտեսությունների կողմից: Հայտնի յե, վոր խորհնտեսություններն ունեն ըգգալի քանակությամբ խոտահարքային հողամասեր և այս հողամասերից խոտը պետք ե հավաքվի մինչև ամենավերջին հեկտարը: Խորհնտեսություններն ամենից առաջ պետք ե լրիվ ապահովեն իրենց անասունները խոտով և բավականաչափ ապահովագրական ֆոնդ ստեղծեն: Խոտահավաքի համար խորհնտեսությունները պետք ե մոբիլիզացիայի յենթարկեն իրենց տրամադրության ներքո աւնեցած բոլոր միջոցները: Սակայն սա բավական չե: Հարկավոր ե, վորպեսզի խոտահավաքի գործում խորհնտեսություններին ոգնեն կոլտնտեսությունները՝ փոխադարձ շահագրգռվածության հիման վրա:

5. ՊԱՏՐԱՏՎԵԼ ԲԵՐՔԱՎԱՎԱԳԻՆ

Գյուղատնտեսական կյանքում կարևորագույն և վճռական ետապը, վորը վորոշում ե գողջ գյուղատնտեսական արդյունքը — դա բերքահավաքի կամպանիան ե: Բերքահավաքի կամպանիան մնացած բոլոր գյուղատնտեսական կամպանիաներից ամենալարվածն ե հանդիսանում: Նա պահանջում ե ամենակարճ ժամկետում հսկայական աշխատանքներ կատարել, վորպեսզի ապահովվի բերքի առավելագույն հավաքումը: Դրա համար ել բերքահավաքի կամպանիայի համար պետք ե նախապարատել բոլոր բերքահավաքի մեջենաները, բոլոր տրակտորները, ավտոմոբիլները, վողջ լծկանը, բոլոր աշխատունակ կոլտնտեսականներին և

Կոլտնտեսուհիներին: Արդյոք 1934 թվին կոլտնտեսականները մի աշխարի համար քանի կիոզրամ հաց կստանան — ահա այս հարցը կախում ունի գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ կոմպլեքսից, սակայն վճռական ազդակը կիանդիսանա բերքահավաքի կամպանիան: Յեթե ժամանակին և արագությամբ հնձենք հացարույսը, ծավալենք կալսումը բերքահավաքի հենց առաջին որերից, յեթե կիրառենք կորուստների դեմ պալքարելու բոլոր միջոցառութենք և այլն, ապա շատ հաց կստանանք, իսկ յեթե այս բոլորը չկատարենք, ապա լավ բերք ունենալու դեպքումն ել, քիչ հաց կստանանք:

Այդ պատճառով ել, կոլտնտեսականների ունեցության բարձրացումը և ընդհանուր բարեկեցության աճումը վճռականորեն կախում ունի բերքահավաքի անցկացումից և, ամենից առաջ, բերքահավաքին պատրաստվելուց: Ահա թե ինչու Յերկրգործկոմը և կուսակցության Յերկրկոմը գեռ մարտի վերջում և ապրիլի սկզբում ուժեղ կերպով դրին բերքահավաքին նախապատրաստվելու հարցը:

Մինչդեռ շատ ույզններում և ՄՏ կայաններում մինչև այժմ բերքահավաքին մարտականորեն պատրաստվելու գործը գեռ չի ծավալված: Յեթե, ինչպես ասում են, սկսում են ուժերը նետել քաղանանի և ցեղերը փարելու վրա, ապա բերքահավաքին նախապատրաստվելը, ինչպես նաև խոտահավաքն ու սիլոսացումը հետագայի գործ են համարում: Այստեղ ցայտում կերպով քողարկվում ե աշխատանքի մանր-բուժվական հերթականությունը, վորը գործնականում առաջնորդում ե գեպի գործի քարքայումը:

Առաջին հարցը — դա բերքահավաքի մեքենաների վերանորոգումն է: Մեր յերկրամասում միայն Հող-

ժողկոմատի սիստեմում հարկավոր ե վերանորոգել (կոր թվերով) 1240 կոմքայն, 7660 բարդ կալսիչներ, 4160 լոկոմոբիլ, 615 շարժիչ, 525 վինտարուեր, 2100 տրակտորաքարշ խոտկապիչ, 8190 ձիաքարշ խոտկապիչ և 57790 հնձող մեքենա և լոբոգրեյկա:

Ըստ վորում կոմքայնները և հացահատիկային բերքահավաքի մեքենաները պետք ե վերանորոգվեն վոչ ուշ, քան մինչև հունիսի 25-ը:

Ինչպես և ընթանում վերանորոգումը մեր յերկրամասում:

Մինչև մայիսի 10-ը Հողժողկոմատի սիստեմում նորոգված և կոմքայնների 26 տոկոսը, բարդ կալսիչների 15 տոկոսը, լոկոմոբիլների 2 տոկոսը, շարժիչների 43 տոկոսը, վինդրուերների 21 տոկոսը, տրակտորաքաշ խրձկապիչների 28 տոկոսը, ձիաքարշ խրձկապիչների 34 տոկոսը, հնձիչ մեքենաների և լոբոգրեյկաների 27 տոկոսը:

Խորհանտեսային սիստեմում վերանորոգումն ավելի վատ և ընթանում:

Վերանորոգման ընթացքը յերկրամասում միանգամայն անբավարար է:

Առանձնապես հետ են մնում Նովչերկասկի, Ազովի, Կանևսկի, Բելոգլինսկի, Ոտրագնենսկի ույզները, Բոլց-Տալովսկայա, Մ-Կուրգանենսկայա, Սեմիբալկովսկայա, Նեղամայեվսկայա, Դյագովսկայա ՄՏ կայանները, Ռոստովի գերնոտրակտորի, Բելոգլինսկի խորհանտեսությունը, Սորտեմտրեստի «Կուբանսկայա» ստեպ» խորհանտեսությունը, Գոսպրոպատվիոգտրեստի «Ինդուստրիա» խորհանտեսությունը:

Ինչու վատ և ընթանում վերանորոգումը: Վորովհետեւ այս գործով ՄՏ կայանները, խորհանտեսությունները և ույզները վատ են զբաղվում: Երանց

մոտ հերթի յեն դրված ուրիշ գործերը, այլ վոչ թե վերանորոգումը: Ի՞նչ չի բավականանում: Արհեստանոցները և կադրերը կան, քանի վոր նրանք անհամեմատ խոշոր աշխատանք կատարեցին տրակտորների ձմեռային վերանորոգման շրջանում: Ընդհակառակը, շատ արհեստանոցներ շատ քիչ են ծանրաբեռնը ված վերանորոգումով: Պահեստի մասերի և նյութերի տեսակետից ճիշտ ե, վոր մեզանում քիչ են անտառային նյութերը, ծխաքաղ խողովակները, կաթսայի յերկաթը, մի քանի այլ մասերը մեր յերկրամասում և ռայոններում միջոցներ են ձեռք առնվում փնտոելու վերանորոգման համար անհրաժեշտ միջոցներ: Սակայն, յեթէ համեմատենք տեղում յեղած պահեստի մասերի և նյութերի քանակը նորոգված մեքենաների քանակի հետ, ապա բոլորովին պարզ յերևում ե, վոր բանը նյութերի և պահեստի մասերի մեջ չե, այլ վատ աշխատանքի մեջ ե: Որինակ, հարկավոր եր դեռ ապրիլ ամսում արհեստանոցները բերել հիմնական և միջակ վերանորոգում պահանջող կալսիչներ ու լոկոմիտիվներ վերանորոգում կատարելու և հետագա աշխատանքների համար հարկավոր եր կալսիչներին և լոկոմիտիւներին ամրացնել մեքենավարներ և հնոցավաներ: Սակայն կատարված ստուգումը ցույց տվեց, վոր մայիսի սկզբներին այս գործը միայն կիսով չափ և կատարված:

Հարկավոր ե կատեգորիկ կերպով պահանջել ՄՏ կայաններից, խորհանտեսառներից և ռայոններից, վոր նրանք սահմանված ժամկետում կատարեն բերքահավաքի մեքենաների վերանորոգման պլանը, ըստ վորում ապահովելով վերանորոգման լավ վորակ: Այս բնագավառում ևս վորակի հարցը կենտրոնական հարց և հանդիսանում, քանի վոր վատ վերանորոգ-

ված մեքենան — մեքենա չե: Վերանորոգված բերքահավաքի մեքենաների ընդունելությունը պետք ե կատարվի նույն կարգով, ինչ վոր սահմանված ե վերանորոգված տրակտորների ընդունելության համար: Իերքահավաքի մեքենաների վերանորոգումն այնպիսի բարձրության պետք ե հասցնել, ինչպիսին դա տեղի ունեցավ տրակտորների ձմեռված վերանորոգման նըկատմամբ:

Յերկրորդ հարցը — վոչ թե ըստ կարևորության, այլ ըստ կարգի — դա բերքահավաքի կամպանիայի համար տրակտորային պարկի, ավտոմոբիլների և լրծկանի նախապատրաստելու ե: Դուք գիտեք, վոր անցալից տարբերվելով, ներկայումս ամբողջ համառությամբ մտցնում ենք պլանային-նախազգուշացնող վերանորոգում, այսինքն վերանորոգում, վոր կատարվում ե տրակտորի աշխատանքի վորոշ քանակությամբ ժամերից հետո, այլ վոչ թե այն ժամանակ, յերբ տրակտորը բոլորովին քանդվի: Ահազին ջանք և աշխատանք, նույնիսկ ֆինանսավես ճնշելու միջոց պահանջվեց, վորպեսզի ՄՏ կայանից ստացվի պլանային-նախազգուշացնող վերանորոգման գծագիր (գրաֆիկ) և այն ել վոչ բոլոր ՄՏ կայանները ներկայացրին գծագիր: Քիչ չեն և այնպիսի ՄՏ կայաններ, վորոնք կազմել են պլանային-նախազգուշացնող վերանորոգման գծագիր, բայց այն չեն կատարել: Վոչ մի կերպ չեն կարող համաձայնվել այն բանի հետ, վոր տրակտորը գեռ աշխատում ե և ստածարկում են յենթարկել պլանային-նախազգուշացնությունը վերանորոգման: Այսպիսի ՄՏ կայանները մտածում են, թե այստեղ չկա արդյոք վասարարություն: Ինձ թվում ե, վոր պետք ե ասել, թե ելավես վասարարություն ե այնտեղ, ուր չի կատարվում տեխնիկական կանոնի հա-

Հաճայն սահմանված պլանային-նախազգուշացուցիչ վերանորոգման գծագիրը:

Ողտվելով Յերկրգործկոմի պլենումի ամբիոնից, յես պետք ե ասեմ դիրեկտորներին, մեքենավարներին, բրիգադիրներին և տրակտորիստներին, վոր արակտորի պլանային նախազգուշացուցիչ վերանորոգման հարցը, ինչպես և տրակտորների արտադրողականության հարցը, սա այն հարցն ե, վորով ամեն որ զբաղվում է վոչ միայն Յերկրհողվարչությունը, այլ նաև Յերկրգործկոմն ու Յերկրկոմը: Սա մի հարց ե, վորին կոնկրետորեն զեկավարում և անձամբ ընկ. Շերովայելքը: Մեր յերկրաման ունի 20 հազարից ավելի տրակտոր, վորոնք, ինչ գնով ել վոր լինի, պետք ե տան իրենց լրիվ արտադրողականությունը, իսկ դրա համար հարկավոր ե լավ ինամբ տրակտորներին: Այդ իսկ պատճառով, պետք ե նախազգուշացնել նրան, վորին հանձնված և տրակտորը, վոր տրակտորի վատ խնամքի համար, վորպես պլանային նախազգուշացուցիչ վերանորոգումը չկատարողի՝ հանցավորները խիստ պատժի կենթարկվեն:

Բերքահավաքի նախապատրաստության կապակցությամբ անհրաժեշտ ե մինչև հունիսի 20-ը անխտիր կատարել բոլոր տրակտորների լիակատար տեխնիկական ստուգումն այն հաշվով, վոր ժամանակին փոխարինվեն մաշված մասերը և վերանորոգվեն այն բոլոր տրակտորները, վորոնք գալրնանային աշխատանքների ժամանակ դուրս են յեկել շարքից կամ ձմեռվա վերանորոգումից հետո վերանորոգված չեն յեղել:

Սրան զուգընթաց, մեր առաջ կանգնում ե վողջ ավտոմոբիլային պարկը լիովին կարգի գցելու հարցը. ավտոմոբիլային պարկը զգալի դեր ե խաղում բերքահավաքի և փոխադրության համար: Սրա համար եր

տրակտորների նման, ՄՏ կայանները և խորհանությունները պետք ե իսկույն տեխնիկական ստուգման յենթարկեն անխտիր բոլոր ավտոմեքենաները, ինչպես սարքին, այնպես ել շահագործման մեջ գտնը վոզները, վորոշել անհրաժեշտ վերանորոգում և ավտոմեքենաների վերանորոգումը լիովին ավարտել մինչև հունիսի 20-ը:

Բերքահավաքին պետք ե նախապատրաստել նաև լծկանը: Անխտիր բոլոր ձիերն ու յեզները պետք ե լինեն աշխատունակ վիճակում: Սրա համար անհրաժեշտ յանքուն ավարտելուց անմիջապես հետո առանձնացնել բոլոր թույլ ձիերին և յեզներին, ազատել ամեն տեսակ աշխատանքից և զիշեր ու ցերեկ արածացնել: Բացի դրանից, անհրաժեշտ բերքահավաքն սկսելուց վոչ ուշ՝ քան 7—10 որ առաջ բոլոր ձիերին և յեզներին, բացառությամբ միայն շարատունկերի մշակմամբ և խոտանավաքով զրադկածների, թողնել հանգստի և կերակրման: Բայց այս բոլորը բավական չե, յեթե չապահովվի բոլոր ձիերի զարգացման և պահպանման մասին կուսակցության և հառավարության կայացրած վորոշման լիակատար կենսագործումը: Գետք ե կատարել միջոցառումների ամբողջ կոմպլեքսը, նույն թվում նաև այնպիսի միջոցառում, ինչպիսին ե բանող ձիերի և յեզների համար ամենորյա հանգիստ սահմանելը:

Մի խոսքով, այժմ անհրաժեշտ ե ամեն կերպ ուժեղացնել ձիերի և յեզների խնամքը, վորը թուլացել և ցանքսի ժամանակ, և բերքահավաքն սկսելու մոմենտին աշխատունակ դարձնել վողջ բանող անհառունը:

Յերկրորդ հարցը—դա մարդկանց, առաջին հերթին վորակավորված կադրերի նախապատրաստումն ե

բերքահավաքի համար: Այդ կազմերից եւ կախված բերքահավաքի մեքենաների աշխատանքը: Միայն Հոգ-ժողկոմատի սիստեմում բերքահավաքին պատրաստ վում եւ ավելի քան 20 հազար մարդ (կոմբայնավար-ներ, մեքենավարներ, շոֆերներ, հնոցավառներ, խուրձ կապողներ և ուրիշներ):

Անցյալ տարվանից տարրերկելով, այժմ նախա-պատրաստումը կատարվում է վոչ միայն դասընթացք-ների, այլ և դպրոցների միջոցով: Ինչ դասընթացք-ների տեղողությունը յերկու անգամ ավել ե, քան տառած: Այս արված են նրա համար, վորապեսզի բարձ-րացվի պատրաստվողների վորակը: Վորակի հարցն այս բնագավառում ևս կենտրոնական հարց ե հան-դիսանում, հիշելով, վոր վատ կոմբայնավարը, շոֆերը և մեքենավարը կարող են ջարդել լավ մեքենան:

Մինչդեռ բերքահավաքի համար կազմեր պատ-րաստելու գործն անբավարար ե ընթանում, դեռ դա-սընթացքները չեն համալրված, մանավանդ խորհուն-տեսային սիստեմում, վորը հաճախ դասավանդողնե-րին և ուսանողներին օգտագործում ե ուրիշ աշխա-տանքների համար, ուսման գործնական մասը թույլ հիմքերի վրա յե դրված և այլն: Այս բոլորը վտանգ ե ստեղծում, վոր մը շարք հողամասերի բերքահավաքն սկսելու ժամանակ կազմերի տեսակետից մենք կարող ենք ճեղքածք ունենալ:

Սրան զուգընթաց, դեռ բնդուալ չենք մոտեցել բերքահավաքի համար մասսայական կազմեր, ինչպես որինակ՝ լորոգրեյկա քշողներ, կշողներ, վորակի տե-սուչներ և ուրիշներ պատրաստելու գործի կազմա-կերպմանը: Այս կազմերը պետք ե պատրաստվեն կար-ճատե հրահանգչական դասընթացքի միջոցով, վորպի-սին պետք է անցկացնել մոտակա շրջաններում: Այս

գործին պետք ե ձեռնարկել ինչպես պետք ե, առանց այլս մի որ անգամ կորցնելու:

Բերքահավաքին կազմեր պատրաստելու համար ահազին պատասխանատվություն ե ընկնում ՄՏԿ և խորհունտեսությունների գիրեկտորների վրա, սակայն միայն սա բավական չե, յեթե այս հարցը չդառնա այժմ լայն հասարակայնության հատուկ ուշադրու-թյան առարկան:

Բերքահավաքը հաջողությամբ անցկացնելու համար անհրաժեշտ ե մշակել ինչպես բերքահավաքի պլան ըստ յուրաքանչյուր ռայոնի, ՄՏԿ, խորհունտեսության և կոլտնտեսության, այնպես ել բերքահավաքի կամ-պանիայի ամբողջ կազմակերպչական կողմը: Ներկա-յումս այսպիսի մշակումը կատարվում ե յերկրամա-սում և տեղերում և անհրաժեշտ ե այնպես անել վոր-պեսզի բերքահավաքի անցկացման բոլոր հարցերը լուծ-վեն մայիս ամսվա ընթացքում:

Ի՞նչ ե հարկավոր, վորպեսզի հաջողությամբ անց-կացվի թե՛ բերքահավաքի նախապատրաստումը և թե՛ հենց բերքահավաքը: Ինձ թվում ե, թե այս հարցին հարկ յեղած պատասխանը տրվում ե Յերկրկոմի պլե-նումի վորոշման նախագծի յեղափակման մասում, վորտեղ ասվում ե: «Յերկրկոմի պլենումը մատնա-նշում ե, վոր ծավալվող կարեկորագույն գյուղատնտե-սական կամպանիաների հաջող անցկացումը հնարա-վոր ե միայն խորհունտեսությունների և կոլտնտեսու-թյունների հետագա ամբացման համար խական բոլ-շեկյան պայքար մղելու դեմքում, գարձնելով նրանք բոլշևիկյան, աշխատանքային կարգապահությունն ամ-րացնելու գեպքում և անխնա հարվածհասցնելով ծուլու-թյան, կորզողության ամեն տեսակի յերևութերին, ինչպես նաև կուլակային և թշնամի տարրերի ամեն

տեսակի փորձերին, վորոնց նպատակն եւ վիժեցնել
աշխատանքը, վատացնել նրա վորակը կամ ուղղակի
ֆասարարական գործողություններով մաս հացնել
կոլտնտեսություններին և խորհունտեսություններին:

Յերկրգործկոմի պլենումը կոչ ե անում խորհունտե-
սությունների բոլոր բանվորներին, բոլոր կոլտնտեսա-
կաններին և կոլտնտեսուհիններին կազմակերպվածու-
թյամբ և աշխատանքի վերելքով նոր վճռական քայլ
կատարել ունեոր կյանքի ճանապարհին»:

Ընկերներ, Ազով-Սևծովյան յերկրամասի բոլշեկ-
ները և կոլտնտեսականները պարտական են վոչ միայն
սրա մասին ասելու, այլ նաև այս տարի վճռական
քայլ պետք ե անեն ունեոր կյանքի ճանապարհին: Սրա
յերաշխիքը մեր փառավոր բանվորա-գյուղացիական
դործին անսահման չափով նվիրված կոմունիստական
կուսակցությունն ե, ՄԵԾ ԱՏԱԼԻՆԻ դիմավորու-
թյամբ:



Отв. ред Г. А. Петенц

Сдан набор 26IV-1934 г.
Илан. 317/3096
Статформат № 125х176
Уполномочит № Б-3935

Типография им. «Столы 1902 года» АЧПТ в г. Ростове на Дону

Тех. ред: О. Тер-Давидов

Подписано в печ. 31/V 1934 г.
Об'ем 1/4 печ. листа.
Заказ 2823
Тираж 1000 экз.

«Ազգային գրադարան



NL0295240

ԳԻՐԸ
Цена

20

ԿՈՊ.
Կոп.

176482

17035

На армянском языке

ЗАДАЧИ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА АЗОВО-ЧЕРНОМОРСКОГО КРАЯ

(Доклад начальника КрайЗУ т. Одинцова
на пленуме Крайисполкома 16 мая 1934 г.).

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

Գ.Ռ.Պ.Ա.ՀԵՍԽԵ

ԱՊՈԽՏՈՎ-ԴՊԽ ՄՈԽԿՈՎԿԱՎԱ ՓՈՂ. № 53

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ԿՐԱԳՈՎԵՐ)